բացրեց մարտիկների տրամադրությունը: Յուլիս 8-ին Բիչերախովի զորամասը յաջող կռիվներ ունեցաւ Քիւրդամիրի ճակատում: Նոյն օրը Թիւրքերը յարձակուեցին Շամախիի վրա, բայց հանդիպեցին սատակիչ դիմադրութեան: Յուլիս 9-ին, բագուեցիները անցան հակայարձակման, և Թիւրքերը լուրջ կորուստներ կրելով և խոշոր աւար թողնելով՝ նահանջեցին: Յուլիս 11-ին բագուեցիները դադարեցրին հետապնդումը՝ վերադրաւելով Շամախիի դիրքերը: Նոյն ժամանակ կռիվներ սկսուեցին և Բագուի զօրքերի ձախ թեւում ու կենտրոնում: Երեք օր տևող ճակատամարտներից յետոյ՝ բագուեցիները չդիմացան ու յետ քաշուեցին՝ բռնելով Կերար կայարանը: Յուլիս 20-ից սկսուեցին մի շարք նոր արիւնահեղ կռիվներ. Բագուի ուժերը նահանջեցին Շամախիից էլ. զօրքի հետ հեռացաւ և շրջանի ամբողջ հայ բնակչութիւնը: Քայլ առ քայլ, անվերջ կռիվներով՝ յուլիս 26-ին զօրքն ու ժողովուրդը հասան մինչև Խուրդալան, իսկ կենտրոնի ուժերը՝ մինչև Ալեաթ՝ ճանապարհին ոչնչացնելով ամէն ինչ:

Յուլիս 26-ին խարէութեամբ, լքելով իր դիրքերը, Դերբենտի շրջանը փախաւ գնդ. Բիչերախովը՝ տանելով հետը իր զօրամասը: Նոյն օրը Հայոց Ազգ. Խորհուրդը Թիւրքերի արևելեան ճակատի պետ Մուրսել փաշայից ստացաւ մի գրութիւն, որով առաջարկում էր վերջ տալ կռիւին և քաղաքը յանձնել իրեն:

Միւս կողմից, անյաջողութիւնները ճակատում չարունակւում էին: Յուլ. 27—28-ին Թիւրքերն արդէն քաղաքի տակ էին՝ Բիբի-Հէյբաթում ու Բալաջարիում: Մի գրոհ ևս, և Բագուն կընկնէր: Յուլ. 28-ի գիշերը ժողովրդի մէջ ծայր էր տուել խուճապը. հայերից և օտարներից ոմանք պատրաստուում էին յանձնել քաղաքը:

Դրութիւնը դառնում էր յուսահատական: Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել: Ռուսաստանից յոյս չկար. Ստալինն ինքը, դեռ յունիսին, Թախանձագին խնդրում էր Շահումեանից «ամէն կերպ (զէնքով, մարդով) օգնել Թուրքեստանին, որի գլխին անգլիացիները, Բուխարայի և Աւղանիստանի վրայով, աշխատում են վատ խաղ խաղալ»: Մնում էր աղօտ հաւանականութիւն օգնութիւն ստանալ «երրորդ ուժից»՝ անգլիացիներից, Պարսկաստանի վրայով: Եւ այդ հարցը դրուեց բանս., դինս., նաւատ. և գիւղացիական խորհուրդների պատգամաւորների և շրջանային խորհուրդների, նաւային կոմիտէների ու կովկասեան կարմիր բանակի Ռազմա-Յեղափոխ. Կոմիտէի արտակարգ նիստում, յուլ. 27-ին: Շահումեանը մի ընդարձակ ճառով աշխատեց համոզել, որ անգլիացիներին հրաւիրելը հաւասար է յեղափոխութեան պարտութեան, որ, աւելի լաւ է հաշտութիւն կնքել Թիւրքերի հետ, բայց անգլիացիներին հրաւիրելու մտքից յետ կենալ: Սակայն և այնպէս, ժողովը միաձայնութեամբ, ընդդէմ բոլշևիկների, որոշեց օգտուել անգլիական ուժերից: Փաստօրէն այդ որոշումը խորհրդային իշխանութեան վերջն էր, բայց Ժող. Գործ. Խորհուրդը մի քանի օր էլ չհրաժարուեց և, ամենքից դաղտնի, սկսեց տենդագին փախուստի պատրաստութիւններ տեսնել: Յուլիս 28-ից մինչև 30, գիշերները, նաւերի վրա փոխադրեցին